Լ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

## ԽՈՍՔ ՀՈԲԵԼՅԱՐԻՆ

Որքան նշանավոր մարդիկ ունի մեր հարազատ հանրապետությունը, որքան տաղանդավոր ու գործիմաց մարդիկ. որոնք տարիներ շարունակ աշխատում են, կառուցում, ստեղծագործում, մարդիկ. որոնք անմահանում են իրենց գործերով, կրում «մեր հանրապետության մարդիկ» պատվավոր կոչումը. մարդիկ. որոնք գնահատվում են, դառնում բոլորին ճանաչելի, բոլորին սիրելի: Ահա այդ մարդկանց շարքին է պատկանում անվանի երկրաբան-գիտնական Կոնստանտին Նիկոլաևիչ Պաֆֆենգոլցը, որը բոլորեց իր կյանքի 75 և գործի 50-ամյակը: Եվ երբ թերթում ես նշանավոր երկրաբանի կյանքի տարեգրության էջերը, սիրտդ լցվում է անհուն բերկրանքով. քանզի լայն, բազմակողմանի ու փառավոր ճանապարհ է անցել նա այստեղ Հայաստանում, այստեղ այս մաքուր երկնքի ու հյուրընկալ հարկի տակ է աճել ու բարձրացել նա. իր հետ բարձրացրել երկրաբանությունը, դարձել նրա սքանչելի վարպետը:

Հեռավոր մառախլապատ Հյուսիսից եկավ նա, եկավ 45 տարի առաջ արևավառ Հայաստան. եկավ որ հերկի նրա երկրաբանության խոպանը, ցանի նրա առաջին սերմնացանը, որ հետո առատ բերք հավաքի:

Եկավ նա արտահագուստը հագին, պայուսակը ուսին, երկրաբանական մուրճը ձեռքին: Եկավ քարտեզահանելու Հայաստան լեռնաշխարհի երկրաբանությունը, հետազոտելու նրա կառուցվածքը, տարածված քարատեսակները և ընդերքում թաքնված օգտակար հանածոները:

Նա ոտքով անցավ անհաշիվ դժվարին երթուղիներ, գիշերեց լեռներում, բաց երկնքի տակ, բարձրացավ լեռնաշխարհի վերամբարձ ձյունածածկ գագաթները և իջավ անդնդախոր, անհատակ ձորերը: Նա տեսավ կապույտ Սևանը և ձերմակագագաթ Արարատը, տեսավ արևային Հայաստանի հինավուրց ամեն մի քարը. մոտիկից ճանաչեց նրա տաղանդավոր ժողովրդին, իր բարձր մշակույթով, իսկ հետո սիրեց ու հարազատի պես կապվեց նրանց հետ:

Պաֆֆենգոլցը մեր ժամանակի ամենախոշոր երկրաբաններից մեկն է, օժտված իսկական մարդու, մեծ հայրենասերի ու մտածողի բյուրեղյա հատկություններով: Նրա երգ երգոց «Հայաստանի երկրաբանությունը» մի անմահ գործ է գրված երգերի արքա Կոմիտասի, խոսքի մեծ վարպետ Իսահակյանի և գույների կախարդ, արևային Սարյանի ստեղծագործությունների ոգով:

Բազմակողմանի ու փառավոր ճանապարհ է անցել Պաֆֆենգոլցը, այստեղ Հայաստանում, այստեղ. այս մաքուր երկնքի ու հյուրընկալ ծածկի տակ է աճել ու բարձրացել նա, իր հետ բարձրացրել երկրաբանությունը, դարձել նրա սքանչելի վարպետը, մեծ նահապետը:

Հայաստանի որդեգիր, ոգով հայ, Հայաստանի պարծանք, մեծ վարպետ և ուսուցիչ:

Պաֆֆենգոլցը տակավին չի սպառել իրեն, չի ասել իր վերջին խոսքը.

Հայկական ՍՍՀ ԳԱ
Երկրաբանական ինստիտուտ
Ստացվել է 29. II 1968